ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06-ը հունիսի 2019թ.
Ժամը 12[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Շլեպչյան,

հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. **«Ֆոտոն ՍՊԸ-ի** կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. **«Ֆոտոն ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման մասին.**

(Ա. Մաղաքյան)

1.1 Ա/Ձ Էդուարդ Մանուկյանի կողմից օրենքով սահմանված ժամկետում ներկայացվեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված քաղվածք, առ այն, որ Ա/Ձ Էդուարդ Մանուկյանը 30-ը մայիսի 2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց տվյալ մասնակցի տվյալները չուղարկել լիազորված մարմին:

1.2 Քանի որ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, իսկ մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կամ կոմիտեի կողմից գնահատող հանձնաժողովին լրացուցիչ տեղեկատվությունը չներկայացվեց, (Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից հարկային մարմնից 04.06.2019թ ներկայացվեց N1050 տեղեկանքն առ այն որ 03.06.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ) և քանի որ վերը նշված տեղեկանքը ներկայացված էր օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները 33-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել լիազորված մարմին:

1.3 **Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի**, **«Օլանդա»**, **«Սպորտ Սիթի»**, **«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ»**, **«Ֆոտոն»**, **«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ների** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվեցին առկա անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **մասնակիցների** կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ **Հավելված N 6-ը** (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և **Հավելված 6.1-ը** (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) և տեխնիկական բնութագրերը գնահատել գնանշման հրավերի պահանջներին համապատասխան:

1.4 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ***25-րդ չափաբաժնի մասով*** **«Ֆոտոն ՍՊԸ**-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագիրը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

1.5 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների հրավերով պահանջվող փաստաթղթերը և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.6 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Շլեպչյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան